

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

ՄՇԱԿ

ՀԱՅԵՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է Լ է Ֆ օ ն № 253.

«ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Յունիսի 1-ից մինչև տարվայ վերջը
կարժեքայ վեճ ընդունվում է.

Դիմել Тифлисъ, редакция „Мшакъ“.

Այն անձինք, որոնք վճարել են մինչև
յունիսի 1-ը և ցանկանում են շարունակել
լրագիր ստանալը, թող հոգ տանեն վա-
ղօրօք յայտնելու այդ մասին խմբագրու-
թեանը, որպէս զի լրագրի առաքումը
չընդհատվի:

Ապագի բաժանորդագրութիւն չէ ըն-
դունվում:

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Երկրի վիճակը. — Ներքին ՏԵՍԻՍԻՒՆԻՆ.
Միտքը կհանքի մէջ. Հայոց ներկայացումը.
Դարձեալ համարաշխութեան մասին. Նամակ
Գանձակից. Ներքին լուրեր. —ԱՐՏԱԲԻՆ ՏԵ-
ՍԻՍԻՒՆԻՆ. Պատերազմի շուրջը. Նոր-Ջուղայի
առաջնորդը Կալիկաթայում: —ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԵՐԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ

Մեր երկրի զանազան մասերից ստաց-
ված տեղեկութիւնները ցոյց են տալիս,
որ գարունը շատ էլ աշոյղ չէ անցնում
մեր երկրի համար: Արաքսի աւազանի մի
մեծ տարածութիւն, այն է Նախիջևանի
Ձանգեղուրի և Զիբրայի զաւառներում
աւերակներ է կատարում մորեխը: Մի
քանի տեղերում բռնկվել է տաւարի
ժանտախար: Տեղի ունեն ընդարձակ տա-
րածութիւնների վրա հեղեղներ, ցուրտ և
կարկուտ:

Այս տարի ձմեռը անցաւ ցուրտ և շատ
տեղերում փնամեցին ծառերը: Գարնան
սկսվեցին անձրևներ, որոնք սակայն այն-
քան յաճախ կրկնվեցին և յորդացան, որ
այժմ գիւղական ժողովուրդը միայն ցան-
կանում է, որ նրանք դադարեն և կարո-
ղութիւն առնեն սկսելու կամ շարունակելու
գարնան աշխատանքները: Լեռնային մա-
սերում ցուրտը այնքան մեծ է, որ գար-
նան աշխատանքները մի քանի շաբաթով
յետ են մնացել անցեալ տարիներին:

Մեր սարահարթերի մի մեծ տարածու-
թեան վրա եկել են ձիւն և կարկուտներ,
ծածկելով երկիրը սփռելով սաւանդ ու
սառցեայ շերտերով: Միւսը, կարկուտը և
ցուրտը փնամել են ոչ միայն բուսական-
ութեան, այլ և անային կենդանիներին,
որոնք թէ փնամել են ցրտից ու կարկու-
տից և թէ առնաստարակ կարողութիւն չեն
ունեցել կարգին կազմակերպելու ձեռնարկ
քաղցից յետոյ:

Գարնան սկիզբներին մեր ազգաբնա-
կութիւնը մեծ յոյսեր ունի, որ ջրի ա-
ռուութիւնը կօղնէ դաշտերին և մարգե-
րին. իսկ այժմ սպասում են արևի և
տաքի ուժեղանալուն, որպէս զի բուսա-
կանութիւնը կանոնաւոր կերպով աճէ և
կարողանայ ժամանակին տալ սպասված
բերքը:

Անկասկած, եթէ եղանակները այսու-
հետև նպաստաւոր լինեն, դեռ շատ բան
կարող է գրասովել և եղած փնամները կա-
րող են նսեմանալ: Տեսնենք ինչ կստէ ի-
րականութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍԻՒՆԻՆ

ՄԻՏՔԸ ԿԵԱՆՔԻ ՄԷՋ

III

Ծանօթանալու պ. Օհանջանեանի մեղքերի
հետ: Ամենագլխաւորը Կ—վա անունով մի
ուսու աղջկայ տղամուկիւն է: 17 թէ 18
տարեկան մի շատ գեղեցիկ աղջիկ, նա փախ-
չում է Աստրախանից իր անպէտք ծնողների

մօտից, գալիս է Բագու: Այդտեղ նա գիտում
է կանանց պաշտպան ընկերութեան և տեղ է
գտնում նրա ապաստանարանի մէջ: Պ. Օհան-
ջանեանը առանձին ուղարկութիւն է դարձ-
նում նրա վրա, պաշտօն է պատրաստում նրա
համար վարչութեան գրասենեակում, մի և
նոյն ժամանակ սկսում է նրան պաշտպանել
ծնողներից, որոնք անդադար պահանջում էին
Աստրախանից, որ ոստիկանութիւնը իրանց
աղջկան «էտապով» յետ ուղարկէ Աստրախան:
Հիմա մեղադրանքի էութիւնն այն է, որ պ.

Օհանջանեանն աչք է ունեցել այդ աղջկայ
վրա: Այդ հանգամանքը չէ ուրանում և պ.
Օհանջանեանը: Նա պարզապէս խոստովանում
է, որ գրաւվել է աղջկայ գեղեցկութեամբ,
վճռել է ազատել նրան անկաման միջավայրից
և ուղարկել ամուսնանալ նրա հետ: Քննիչ
մասնաժողովը, մի քանի վկաների ցուցմունքի
վրա հիմնված, եկել է այն եզրակացութեան,
որ պ. Օհանջանեանը, Կ—վայի վերաբերմամբ
իր ունեցած նպատակին հասնելու համար,
գործադրելիս է եղել ոչ միայն իր անձնական
միջոցները, այլ և իր քաղաքացիական իշ-
խանութիւնը: Երբ փաղաքանքները չեն օգ-
նել, նա դիմել է ճնշումների, փակել է Կ—
վային ապաստանարանի մէջ, մի խօսքով
փորձել է բոլոր միջոցները՝ նրանից համա-
ձայնութիւն ստանալու համար: Բայց աղջիկը,
ինչպէս ցոյց են տուել վկանները, չէր համա-
ձայնում պ. Օհանջանեանի կինը դառնալ,
վրդովվում էր նրա անբարոյական արարքնե-
րից և այլն:

Այս բոլոր պատմութիւնից պ. Օհանջա-
նեանը, ինչպէս ասացինք, խոստովանում է
միայն սիրահարութիւնը, իսկ միւս բոլոր մե-
ղադրանքները հերքում է: Նա ցոյց է տալիս
Կ—վայի նամակը (ըննիչ մասնաժողովը չէր
ընդունել այդ նամակը), որից երևում է թէ
աղջիկը բոլորովին խուսափելիս չէ եղել պ.
Օհանջանեանից. ընդհակառակը, միշտ ընդու-
նում էր նրա ընծաները, խնդրում էր ազա-
տել իր ծնողներից, և եթէ չէր համաձայնվում
նրա կինը դառնալ, պատճառն այն էր միայն,
որ նա հայ է. բայց, սակայն, նա էր միայն
ամուսնութիւնը չէ այն ձեւը, որ թոյլ է տա-
լիս երկու սեռերի ներկայացուցիչներին ապ-
րել իրար հետ:

Վկանները, որոնք ցուցմունքներ են տուել
պ. Օհանջանեանի դէմ, ապաստանարանում
ապրող կանայք են, մէկ էլ վերակացուհին, որ
և վարչութեան անդամ է: Բայց ապաստանա-
րանի ընտելութիւններից մէկը հեռացրված է
եղել այդտեղից այն պատճառով, որ անբա-
րոյականացնող աղբեղութիւն էր գործում ու-
րդների վրա, իսկ վերակացուհու դէմ պ. Օ-
հանջանեանը, գանգատ է ներկայացրել վար-
չութեան մի մանրամասն գեղեցկագրով, որի
մէջ նա ապացուցել է թէ վերակացուհին զօ-
րանոցի կարգեր է հաստատել ապաստանա-
րանի մէջ:

Մի և նոյն կերպով պ. Օհանջանեանը հեր-
քում է և այն, որ իւր թէ ինքը հարբած
գրութեան մէջ գիշերները գալիս է եղել ա-
պաստանարանը: Մնում է մի շատ ծանր ան-
բաստանութիւն—այն, որ պ. Օհանջանեանը
գրագրութիւն է ունեցել ինչ որ հայի հետ՝
ապաստանարանում ապրող երկու աղջիկների
նրան տալու մասին: Այդ գործի հանգամանք-
ներն էլ այսպէս է բացատրում պ. Օհանջա-
նեանը: Հաջի-Կարուլում երկու աղջիկ, թող-
նելով իրանց իրերը այդ հայի մօտ, գնում են
Բագու և տեղ են գտնում ապաստանարանի
մէջ: Նամակագրութիւն են շարունակում Հա-
ջի-Կարուլի հայի հետ, որ և նամակներ
էր գրում պ. Օհանջանեանին, խնդրելով բաց
թողնել աղջիկներին, որ վերադառնան իրանց
տեղը: Պ. Օհանջանեան չորս նամակ ստա-
նում, բայց ոչ մէկին չէ պատասխանում: Այն
ժամանակ հայը գնում է Բագու, պահանջում
է, որ իրան թոյլ տան տեսնել աղջիկներին
հետ և պ. Օհանջանեանը թոյլ է տալիս: Հայը
վերջնում, տանում է աղջիկներին և պ. Օ-
հանջանեանը չէ արգելում այդ, չէր էլ կարող,

ի հարկէ, արգելել, քանի որ աղջիկները ի-
րանց կամքով էին գնում:

Նամակներ ստանալը և գրագրութիւն ու-
նենալը երկու տարբեր բաներ են, ասում է
պ. Օհանջանեանը: Ինքը երկու տարի պաշ-
տօն է վարել վարչութեան մէջ, ծրագրեր են
ներկայացրել անառակութեան դէմ կուելու
մասին, ուստի և ծայրահեղ անբարեխղճու-
թիւն է մեղադրել, թէ նա միջնորդի դեր է
կատարել, մեղադրել, հիմնվելով չը ստուգված
լուրերի վրա:

Այս բոլոր բացատրութիւններից յետոյ,
ընդհանուր ժողովի մէջ կասկած է ծագում
թէ ճիշդ որ քննիչ մասնաժողովը կատարեալ
բարեխղճութեամբ է կատարել իր գործը, և
արդեօք հարկաւոր չէ լրացուցիչ քննութիւն
կատարել: Նախագահը դնում է այս հարցը
սկսվում է մի տարբերակ ըուէրակութիւն,
որին մասնակցում են և քննիչ մասնաժողովի
անդամները: Ընդհանուր ժողովը գտել էր,
մասնաժողովի անդամները ընկերութեան ան-
դամներ են, ուստի կարող են ձայն տալ:
Այո, բայց, մոռացվել էր, որ մասնաժողովը
չէ կարող իր ձայնով համաձայնութիւն տալ իր
գործին: Պատել գրացմունքը պիտի հարկա-
դրէր, որ մասնաժողովի անդամները իրանք
հրաժարվէին ըուէրակութիւնից: Սակայն կար-
գալով ժողովի նկարագրութիւնը, տեսնում
ենք, որ մասնաժողովի անդամները կրթու-
ն են վերաբերվում պ. Օհանջանեանին և ընդ-
հանուր ժողովում: Ուստի գրածանալին չէ, որ
նրանք իրանց վստահութեան ըուէ տուին: Եւ
ստացվեց այսպիսի պատկեր. 9 ձայներ (ո-
րոնց հետ և ժողովի նախագահը) մասնաժող-
ովի քննութիւնը անկատար համարեցին, իսկ
12 ձայն, որոնց մէջ էին և քննիչ մասնաժո-
ղովի 4 ձայները, բաւարար համարեցին այդ
քննութիւնը: Հարցը վճռվեց այսքան տար-
բերակ «ձայների բազմութեամբ»:

Այնուհետև, երկար ու տաք վիճարանու-
թիւններից յետոյ, ընդհանուր ժողովը կայաց-
րեց այսպիսի որոշում. «Ընկերութեան քաղ-
աքական և վարչութեան անդամ պ. Օհանջա-
նեանի գործողութիւնները ճանաչել թեթեա-
միտ և ոչ կատարելապէս համապատասխանող
նրա պաշտօններին: Յայտնել հին վարչութեան
ցաւ՝ աննորմալ կարգերի համար»:

Ահա գործի պատմութիւնը: Այժմ մեր եզ-
րակացութիւնները:

Լ.

ՀԱՅՈՑ ՆԵՐԿԱՅՈՒՆՈՒՄԸ

Երեքշաբթի, մայիսի 18-ին, վրաց ազնուա-
կանութեան թատրոնում զերասանների և սի-
րողների մասնակցութեամբ ներկայացվեց Լ.
Մանուէլեանի «Նկարիչ Փաշենան» պիեսը չորս
գործողութեամբ:

Ներկայացումը գրաւել էր բաւական հասա-
րակութիւն, թատրոնի երեք բառորդ մասը
ընծաւով էր:

Պիեսը առաջին անգամ էր տրվում Թիֆ-
լիսում և թատրոն եկած հասարակութիւնը
ընդադատաբար էր վերաբերվում ներկայաց-
ման: Անտրակտներում տեղի ունէին վիճա-
բանութիւններ պիեսի նիւթի, նրա մշակու-
թեան, գործողների ընդդռնութեան և զերա-
սանների խաղի մասին: Ընդհանուր ապաւո-
րութիւնը նպաստաւոր էր և հասարակութիւնը
ընուն ծափահարում էր զերասաններին և բեմ
կանչեց պիեսի հեղինակին:

Պիեսի էութիւնը հետեւեալն է: Նկարիչ Մի-
քայէլ Փաշենան, չը գտնելով խրախոյս իրան
չըլծապատող հասարակութեան կողմից, ընտա-
նական ծանր հոգսերի ազդեցութեան տակ,
վճռում է պաշտօն ստանձնել իր հօրեղոր ա-
ւետական տան գրասենեակում մասնաւոր ու-
նիկով, յոյս ունենալով, որ շուտով կը վերադառ-
նայ բարձրագոյն դպրոցից նրա եղբայր Վահանը
և կը թեթեւացնէ նրա բեռը: Եղբայրը արդարեւ
շուտով վերադառնում է, բայց նա չէ ցանկա-
նում օգնել իր օրը ու բոլորներին և այդպիսով
նկարչի համար ստեղծվում է մի անելանելի

դրութիւն, որը վերջանում է հոգեկան տան-
ջանքներով և մահով:

Պիեսի գաղափարը իղէալին ծառայելու մա-
սին գրաւել է և շարժում է հետաքրքրութիւն:
Պիեսի արժանաւորութիւններն են նաև որոշ
ընտելութիւններից ցուցումը և ժամանակա-
կից մի հարցի մշակութիւնը: Պիեսի պակասու-
թիւններն են՝ ձգձգված մի քանի խօսակցու-
թիւններ և մի քանի տեսարանների տեխնի-
կական թուլութիւնը: Նկարիչ Փաշենանը ա-
ռաջին գործողութեան մէջ չափազանց շուտ է
ընկճվում և սպասածից աւելի վաղ ու առանց
մեծ դիմադրութեան վճռվում է ընդունել պաշ-
տօն գրասենեակում: Նկարչի կնոջ դերը բա-
ւականաչափ պարզ չէ և պահանջում է կա-
տարողից մեծ աշխատանք նրան կենդանի
դուրս բերելու համար: Երբորդ գործողու-
թիւնը կարօտ է ճիւղացման այնպիսի կենցա-
ղավարական մանրամասնութիւններով, որոնք
տային կառավարչի դերին ամբողջութեամբ,
կենսունակաւորութիւն և հոգեբանական հետա-
քրքրութիւն:

Նկարչի դերը կատարում էր դերասան Ն.
Յովհաննիսեան, որին մենք առաջին անգամ
ենք տեսնում բեմի վրա. նա բարեխղճաբար
ուսումնասիրել էր իր դերը, արտայայտում էր
հոգեբանական յուզմունքները, գիտէ մտքնել
անհրաժեշտ փոփոխութիւններ իր առաջնու-
թեան մէջ և առնաստարակ լաւ է արտաստում.
բայց նա մի պակասութիւն ունի, որ ֆիստում
է նպաստաւոր տպաւորութեանը—գա, չափա-
զանց ողբերգու, նոյն իսկ լալկան լինելի է
փոքր ի շատէ աչքի ընկնող յուզմունքների
տեսարաններում: Յովհաննիսեանը ընդհան-
րապէս խաղաց խելացի և տուեց պիեսի հե-
րոսի ամբողջացրած տիպ: Նա արժանացաւ
բուն ծափահարութիւնների:

Օրիորդ Ուրթաբեան խաղում էր մտածված,
աշխատելով դերին տալ կենսունակութիւն,
բայց ինքը դերը առիթներ չէ տալիս յուզ-
մունքների արտայայտելու: Դերակատարը չա-
փազանց շատ ժամանակ է անցկացնում բեմի
վրա, բայց թէ գործողութեամբ և կցկտուր
խօսակցութեամբ, յաճախ իրեն անխօս վկայ:
Մ. Մանուէլեան պահում է իրան բեմի վրա
ազատ, հմուտ շարժումներով, խօսում է երկէջ-
ներով, բայց արտասանում է չափազանց արագ
և ցածր ձայնով:

Միւս դերակատարները բաւարար էին:
Սիրող

ԳԱՐՁԵԱԼ ՀԱՄԵՐԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ (Նամակ Երեւանից)

Յաճախ ստիպված էք լինում կանգ առնել
շատ հին, ընդհանրացած ճշմարտութիւնների
վրա և կրկնել այն, որի մասին խօսել, հոգա
տանել վաղուց պիտի դադարած լինէիք. բայց
փաստը-դառն իրականութիւնը իւրաքանչիւր
անգամ գալիս ցցվում է ձեր առաջ և ստի-
պում հին հին ճշմարտութիւններ կրկնել:

Միմեանց հետ խաղալ ապրող այլապէս և
աշխարհում ազգերի մէջ համեմատութիւն, դրա-
ցիական լաւ յարաբերութիւն և բարեկամական
վերաբերմունք բարոյիւր դեռ ևս տանական
տարիներ առաջ առանձին տեղ գտան հայ
մամուլի մէջ: Երկրի արդիւնաբերութեան դար-
գացումը, տնտեսական մի շարք խնդիրների
լուծումն հնարաւոր էր բազմապէս ժողովրդնե-
րի համերաշխ գործակցութեամբ, միացած
ուժերի ձեռնբեցութեամբ: Հայ մամուլի այդ
ուղղութեամբ արած կոչը անհետանք չանցաւ,
նա ունեցաւ իր նշանակութիւնը, բայց ոչ ցան-
կալի չափով: Կովկասում ապրող երկու ցեղե-
րի՝ հայերի և թուրքերի, մէջ տեղի ունեցող
թշնամական վերաբերմունքը թէ է թուլացաւ,
բայց նա նորից արտայայտվում էր այս կամ
այն տեղում, որտեղ առիթը ներկայանում էր:
Օրինակ, քաղաքային բնութեան իրական-
ում և կը փանձակուէ, Բագու, Շուշի և Երևան
քաղաքներում, ուր թուրք տարրը առաջնորդ-
վում էր ցեղական հաշիւներով: Լարված յա-
րաբերութիւններ աւելի մեծ չափով և յաճախ

Типографія «ГЕР.МЕСЪ» С. Назарянца, Лих. пр. № 81